Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սգակիր Նախագահ, հանգուցյալ վարչապետի սգացյալ այրի և զավակներ, բարեպաշտ ժողովուրդ.

Մեծ վիշտ ենք ապրում ամենքս: Կորստի ցավն ու տխրությունը մեր սրտերում՝ հրաժեշտ ենք տալիս պետական-քաղաքական սիրված գործիչ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ով երկրային կյանքից անժամանակ հեռացավ՝ թողնելով բարի հիշատակ, հայրենաշեն և ազգանվեր գործեր:

Բոլորիս աչքի առջև է գործերով արժեվորված և արժեքներով ներշնչված նրա կյանքը: Հայրենիքի սերը հոգում՝ դեռ երիտասարդ հասակից անկեղծ նվիրումով մասնակից դարձավ Հայաստանի անկախության համար պայքարին, հայության արդար դատի պաշտպանությանը և ազգային իղձերի մարմնավորմանը: Տեսավ իրականացած հայրենի անկախ պետականության վերականգնման իր երազը և առանձնակի նախանձախնդրությամբ իր կարողությունները ծառայեցրեց Հայաստանի նոր կյանքի կառուցմանը: Ազգային արժեքներով բարոր ու շեն, օրինահարգ և զարգացող Հայրենիք ունենալու տեսիլքը իր հոգում՝ նա կոչվեց գործադիր բարձր իշխանության: Իշխանությունն ու պաշտոնը ճշմարտապես ընկալեց որպես ժողովրդին մատուցվող ծառայություն և իր վարչապետության տարիները արդյունավորեց անձնվեր աշխատանքով ու մնայուն ձեռբերումներով՝ ի խնդիր մեր երկրի առաջընթացի և մեր ժողովրդի բարեկեցիկ կյանքի: Հայրենիքը սիրելու, ազգը սիրելու վառ օրինակը թողեց մեզ և սերունդներին, օրինակը՝ նվիրյալ գործունեությամբ համազգային իղձերի տերը լինելու և դրանք կյանքի կոչելու պատասխանատվության և վճռականության:

Մենք սիրով ենք հիշում հոգելույս Անդրանիկ Մարգարյանի հետ ունեցած հանդիպումները, որոնց ընթացքում զգացել ենք նաև նրա խորին հարգանքը հանդեպ համայն հայության նվիրական Սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Հանգուցյալ վարչապետը նույնպես իր գնահատելի նպաստը բերեց Հայ Եկեղեցու առաքելությանը՝ անվարան հավատով, որ Աստծուն ապավինած, Հայ Եկեղեցու օրհնության ներքո պիտի շարունակի ապրել հայ ժողովուրդը:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հիշատակը միշտ ապրելու է մեր հոգիներում իր անմիջական ու բարի, մարդասեր և հայրենասեր նկարագրով, ծառայության իր վաստակով Հայրենիքին ու ժողովրդին:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր անբավ ողորմությամբ երկնից հավիտենական հանգրվաններում լույսերի և երանավետ խաղաղության մեջ ընդունի հոգին հանգուցյալ վարչապետի և Սուրբ Հոգու շնորհով սփոփանք և մխիթարություն պարգևի ննջեցյալի սգակիր այրուն և զավակներին, մերձավորներին և մեզ ամենքիս:

Թող Տերը խաղաղության Իր շնորհի ներքո պահպանի հայրենի մեր պետությունը և ազգս հայոց և օրհնի մեր ժողովրդին՝ իրականության առաջնորդելու այն իղձերը, որոնք կրում էր իր հոգում նաև լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Խունկ, աղոթք և օրհնություն ի Տեր հանգյալ Անդրանիկ Մարգարյանի բարի հիշատակին ու շիրիմին. Ամեն: